DOI:10.57192/18291864-2025.4-3

# «ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ» ԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ*


## Ամփոփում

Հրապարակումը նվիրված է «Իրական Հայաստանի գաղափարախոսություն»[1] նախագծի բովանդակային քննությանը: Իրականացվում է փաստաթղթում առկա «իրական Հայաստան» ու «պատմական Հայաստան» հասկացությունների նշանային համակարգերի (սեմիոտիկայի) ու սեմանտիկ բովանդակության քննությունը: Ցույց է տրվում, որ հայոց անկախ պետականության վերականգնումից հետո «իրական Հայաստան» հասկացությունը մեզանում պարզ կրկնաբանություն է դարձել: Ավելին՝ պատմական Հայաստանի ֆիզիկապես գոյություն չունենալու պատճառով դրանք հնարավոր չէ համեմատել համաժամանակյա (սինքրոնիկ) հարթության վրա, իսկ տարաժամանակյա (դիաքրոնիկ) մոտեցումով անցյալի ու ներկայի գիտական ընկալումները ոչ թե հակադրվում, այլ լրացնում են մեկը մյուսին: Ուստի այս հասկացությունների միջև հակադրություն ստեղծելու փորձերը գիտական հիմք չունեն, իսկ քաղաքական առումով 1990-ականների ՀՀՇ-ական «նորամուծությունների» թույլ «շորշոփն» են հիշեցնում: Մինչդեռ՝ եթե 1990-ականներին նման հնարքներն ինչ-որ առումով կարելի էր հասկանալ որպես խորհրդային դարաշրջանի հետ համեմատության փորձեր, ապա այժմ դրանք վերածվում են իմացաբանական նիհիլիզմի: Որովհետև չըմբռնելով անգամ իրենց կողմից կիրառվող հասկացությունների իմաստը՝ «իրական Հայաստան» կրկնաբանության հեղինակները գործի են դրել մի սովորական ամբոխահաճ (պոպուլիստական) հնարք՝ հայ ազգի անցյալը ներկայից արհեստականորեն տարանջատելու համար:


Ուստի մեր հասարակությանն ու քաղաքական ուժերին Հայոց պետականության պատմության վերաբերյալ տարրական գիտելիքներ մատուցելու նպատակով, «Վէմ»-ի խմբագրականը համառոտ անդրադարձ է կատարել նոր ժամանակների հայոց առաջին պետական այրերի պատմական փորձին՝ ոչ թե Հայաստանում, այլ «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» նախագծում առկա կոգնիտիվ փակուղիների հաղթահարման համար:

---

* Ընդունվել է տպագրության 30.12.2025:

[1] Տե՛ս https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2025/02 /19/Nikol-Pashinyan-Speech/:

Ավելին՝ հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումների արագացման փաստը, «ՎԷՄ»-ի խմբագրականի մեջ համոզմունք է հայտնվում, որ մեզանում պետականության բացակայության պայմաններում ստեղծված «իրական Հայաստան» հասկացության միջոցով գործի դրվող մակերեսային փորձարարություններն առաջիկայում կորցնելու են իրենց ռազմավարական հեռանկարները: Ներկա փլուզվող աշխարհակարգում բացառվում է Խորհրդային Հայաստանը հիշեցնող ևս մեկ հայկական ռեզերվացիայի ձևավորումը՝ այս անգամ էլ Մեծ Թուրանին սպասարկելու նպատակով: Որովհետև «Իրական Հայաստանի գաղափարախոսության» միջոցով ռեզերվացիաների հերթափոխը սպասարկելու քաղաքական նպատակադրումը հակասում է գլոբալ խաղացողների միջնաժամկետ ծրագրերին:

«Լենին-Աթաթուրք» նոր գործարքը բացառող ԱՄՆ դիրքերի ամրապնդումը ու Ռուսաստանի նահանջի նշանները արտաքուստ թուրք-ամերիկյան կոնսենսուսի առկայության տպավորություն են ստեղծել: Մինչդեռ մեր շուրջը ծավալվող գլոբալ խաղի խորքում ոչ թե ամերիկա-ռուսական դիմակայությունն է, այլ Չինաստանի հզորացումը սանձելու նպատակադրումը: Ուստի Մեծ Թուրանի ծրագիրը գործարկելու սպառնալիքը Ռուսատանին զրկում է ԱՄՆ-ի ու Չինաստանի միջև խուսանավելու հնարավորությունից: Նրա առջև հստակորեն ուրվագծվող հետխորհրդային ողջ հարավը կորցնելու և ապա՝ «ներքին թուրքերի» հետ պատերազմելու գոյաբանական սպառնալիքի կանխումը այժմ հնարավոր է միայն ողջ Արևմուտքի հետ քաղաքական երկխոսության վերականգնման միջոցով:

Ուստի «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» ոչ գրագետ նախագծի միջոցով Հայաստանը ռեզերվացիաների հերթափոխի փորձադաշտ դարձնելու անթաքույց նպատակադրումը գործելու է միայն ժամանակի կարճ տևողության ծիրում:

**Բանալի բառեր** – «իրական Հայաստան», պատմական Հայաստան, գաղափարախոսութուն, հայրենիք, ժողովուրդ, ազգ, ազգ-պետություն, իդեալ, իրականություն:

**“THE IDEOLOGY OF REAL ARMENIA”**
**A SCHOLARLY EVALUATION**

Abstract

The publication is devoted to a substantive analysis of the project entitled “The Ideology of Real Armenia.”

The study examines the semiotic systems and semantic content of the concepts “real Armenia” and “historical Armenia” as they appear in the document.

It is demonstrated that, following the restoration of Armenian independent statehood, the concept of "real Armenia" has become a mere tautology in Armenian discourse. Moreover, due to the physical non-existence of historical Armenia, these two notions cannot be compared on a synchronic level, while from a diachronic perspective, scholarly understandings of the past and the present do not oppose one another but rather complement each other.

Therefore, attempts to construct an opposition between these concepts lack any scientific foundation and, politically, recall only the faint "rustling" of the ANM-era (Armenian National Movement) "innovations" of the 1990s. Whereas in the 1990s such devices could, to some extent, be understood as attempts to draw comparisons with the Soviet period, today they are transformed into epistemological nihilism. This is because, without even grasping the meaning of the concepts they themselves employ, the authors of the tautological notion of "real Armenia" have resorted to a commonplace populist maneuver—namely, the artificial separation of the Armenian nation's past from its present.

Accordingly, with the aim of providing Armenian society and political forces with elementary knowledge concerning the history of Armenian statehood, the editorial board of Vem has undertaken a brief examination of the historical experience of the first Armenian statesmen of the modern era—not in order to analyze Armenia itself, but to overcome the cognitive dead ends inherent in the project "The Ideology of Real Armenia."

Furthermore, taking into account the acceleration of regional developments, the Vem editorial expresses the conviction that the superficial experiments carried out through the concept of "real Armenia," which emerged under conditions of the absence of statehood in Armenia, will soon lose their strategic prospects. In the context of the current disintegrating world order, the formation of yet another Armenian reservation reminiscent of Soviet Armenia—this time in service of the Greater Turan—is excluded. This is because the political objective of servicing a rotation of reservations through the "Ideology of Real Armenia" contradicts the medium-term plans of global actors.

The strengthening of U.S. positions that preclude a new "Lenin–Atatürk" deal, together with signs of Russia's retreat, has outwardly created the impression of a Turkish–American consensus. However, at the core of the global game unfolding around us lies not an American–Russian confrontation, but the objective of containing China's growing power. Consequently, the threat of activating the Greater Turan project deprives Russia of the ability to maneuver between the United States and China. The clearly emerging existential threat of losing the entire post-Soviet South and subsequently being drawn into a war with the "internal



Վեմ հասարակական հանդես, ԺԷ (ԲԳ) տարի, թիվ 4 (92), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2025

Turks" can now be prevented only through the restoration of political dialogue with the entire West.

Thus, the overt objective of turning Armenia into a testing ground for a rotation of reservations through the ill-conceived project "The Ideology of Real Armenia" will operate only within a short temporal horizon.

Key words - "real Armenia," historical Armenia, ideology, homeland, people, nation, nation-state, ideal, reality.

## НАУЧНАЯ ОЦЕНКА «ИДЕОЛОГИИ РЕАЛЬНОЙ АРМЕНИИ»

Аннотация

Публикация посвящена анализу проекта «Идеология реальной Армении». В работе проводится сравнительное исследование знаковых систем (семиотики) и семантического содержания понятий «реальная Армения» и «историческая Армения», представленных в данном документе. Показано, что после восстановления независимой армянской государственности, первое из этих понятий фактически превратилось в простую тавтологию. И поскольку в условиях физического отсутствия исторической Армении как реальности, невозможно применение синхронического подхода в его сравнительном исследовании с «реальной Армением», а при диахроническом подходе научные представления о прошлом и настоящем лишь дополняют друг друга и попытки противопоставления указанных понятий не имеют под собой научного основания. А в политическом плане они воспроизводят уязвимые концептуальные подходы 1990-х гг., связанные с деятельностью Армянского общенационального движения (АОД).

Но если в 1990-е годы в определённой мере можно было понять и обосновать подобные приёмы на плоскости сравнения с опытом советской эпохи, то в современных условиях они представляют собой полный нонсенс. Не вникая в значения научных категорий, авторы проекта использовали простую тавтологию «реальная Армения» как орудие для обычного популистского приёма с целью искусственного отделения прошлого армянского народа от настоящего.

В публикации отмечается, что авторы проекта «Идеология реальной Армении» демонстрируют недостаточное владение базовыми категориями научного исторического знания, что приводит к методологическим ошибкам и терминологической некорректности. Понятно, что подобный политологический брак не способен служить основой для решения более или менее значимых задач.

Поэтому, несмотря на данный недостаток, продолжая свою миссию по исследованию истории армянской государственности, редакционная статья журнала «Вэм» обращается к историческому опыту государственных деятелей

Армении новых времен, полагая, что его научное осмысление может способствовать преодолению тупиков возникших не в армянской политической реальности, а в мышлении государственных мужей современной Армении.

В заключении, высказывается убеждение, что историко-политические эксперименты, основанные на употреблении понятия «реальная Армения», которая сформировалась в условиях отсутствия государственности, с ускорением глобальных и региональных процессов утратили свои стратегические перспективы. В условиях крушения мирового порядка формирование еще одной армянской резервации, напоминающей Советскую Армению, на этот раз для обслуживания Великого Турана, исключено. Потому что политическая задача обслуживания ротации этих резерваций с помощью «Идеологии реальной Армении» противоречит среднесрочным планам глобальных игроков.

Укрепление позиций США, исключающее новую сделку «Ленин-Ататюрк», и обманчивые признаки отступления России внешне создали впечатление турецко-американского консенсуса. Между тем, в глубине разворачивающейся вокруг нас глобальной игры не американо-российская конфронтация, а задача сдерживания усиления Китая. Поэтому угроза запуска программы «Великий Туран» лишает Россию возможности маневрировать между США и Китаем. Экзистенциальная угроза потери всего постсоветского Юга и последующей войны с «внутренними тюрками», может быть предотвращена только путем восстановления политического диалога со всем Западом.

Поэтому задача  превращения Армении в региональный полигон для послеующей ротации резерваций с помощью неграмотного проекта «Идеология реальной Армении» сработает только в краткосрочной перспективе.

**Ключевые слова:** «реальная Армения», историческая Армения, идеология, невменяемость, родина, народ, нация, нация-государство, идеал, реальность.

## Մուտք

Ուշադրությամբ ընթերցելով «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» նախագիծը ակնկալում էինք գտնել մեր հասարակությանը հուզող հարցերի պատասխանները, կամ գոնե՝ դրանց վերաբերյալ իշխող քաղաքական ուժի դիրքորոշումները: Ուստի մեծ էր մեր հուսախաբությունը փաստաթղթում առկա կենցաղային մակարդակի, ժողովրդահաճ դատողությունների հեղեղից, որոնք արտացոլում են Հայաստանում իշխող քաղաքական ուժի գիտելիքների ու պատկերացումների մակարդակը: Եթե նման գիտաքաղաքական խոտանը թարգմանվի ու հայտնվի արտասահմանյան մամուլի էջերում, ապա կարելի է միայն պատկերացնել թե ինչպիսի հարված կհասցնի



*ՀԷՀ հասարակական գիտութ., ՀԷ (ԲԳ) տարի, թիվ 4 (92), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2025*

մեր երկրի հեղինակությանը: Գիտության ասպարեզում բարի համբավ ունեցող Հայաստանում իշխող քաղաքական ուժի գիտաքաղաքական անհամարժեքության այս ակնառու վկայությունը պետք է ահազանգ դառնա ոչ միայն մեր գիտնականների, այլև մտածող ու մտահոգ քաղաքացիների համար:

## 1 Չիմացությունը փաստարկ չէ

Քանի որ քննության առարկա փաստաթղթի վերնագրում առկա են միանգամից երեք բանալի հասկացություններ՝ **իրական Հայաստան**, **պատմական Հայաստան** և **գաղափարախոսություն**, արտաքուստ «եռամիասնության» տպավորություն ստեղծող այս «ծաղկեփունջը» գիտական հիմնավորման կարիք ունի: Ավելին՝ անիմաստ է նման հասկացությունների համադրումը, եթե չի հստակեցվում, թե ի՞նչ բովանդակություն են տեղադրել հեղինակները դրանցից յուրաքանչյուրի ներսում: Որպես որոշակի գաղափարներ արտահայտող նշանների համակարգ, լեզուն չի կարող գործառել նրանց միջոցով ձևակերպվող մտքերից ու դատողություններից դուրս: Եթե չի հստակեցված յուրաքանչյուրի սեմանտիկ բովանդակությունը, ապա այդ ելակետային հասկացություններից որևէ մեկի սխալականությունը հանգեցնում է ձևական տրամաբանությունից հայտնի՝ **հիմնային սխալի** (Error fundamentalis):

Ուստի երբ խոսվում է Հայաստանը «իրականի» ու «պատմականի» բաժանելու մասին, սկզբում հարկավոր է հստակեցնել դրանց տարբերակման բովանդակային չափորոշիչները և ապա անցնել «գաղափարախոսություն» եզրույթին: Առավել ևս, որ վերջին հասկացության մասին կարելի է խոսել միայն որպես **քաղաքական գաղափարախոսություն**, այսինքն՝ միմյանց ու արտաքին աշխարհի հետ հարաբերությունների արտացոլում**:**

Ավելին, քանի որ փաստաթղթի հեղինակները պնդում են, որ «իրական Հայաստանը» ներկայումս գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունն է, ապա ո՞ր հարթության վրա են այն հակադրել ֆիզիկապես գոյություն չունեցող՝ պատմական Հայաստանին: Պարզ է, որ համաժամանակյա (սինքրոնիկ) մոտեցմամբ դա անհնար է իրականացնել, ուրեմն մնում է երկրորդ՝ դիաքրոնիկ (տարաժամանակյա) հարթությունը, որտեղ պատմականն ու իրականը ոչ թե բախվում, այլ փոխլրացնում են մեկը մյուսին՝ որպես Հայոց պատմության **դիաքրոնիկ ամբողջականություն**: Ուրեմն՝ եթե հարցին մոտենանք գիտական չափորոշիչներով, ապա նման հակադրությունը շինծու է ու հորինված: Սրանից կարելի է ենթադրել, որ նախագծի հեղինակները ավելի մասնավոր դեպքեր են նկատի ունեցել՝ քաղաքական աշխարհագրությունը, այսինքն՝ նախկին ու ներկա սահմանների տարբերությունը, կամ՝ էլի-

տաների քաղաքական մտածողությունը: Նման մոտեցումը նույնպես կամայական բնույթ ունի, քանզի չպետք է մոռանալ, որ պատմության մեջ եղել են դարաշրջաններ, երբ մենք ընդհանրապես պետություն չենք ունեցել, բայց դա հայ ազգի հիշողությունից չի ջնջել **Հայաստանը**՝ որպես անցյալից բխող նվիրական գաղափար, կամ ապագայի երազանք:

Ուրեմն հիմքում մեր մտածողության համակարգն է, որտեղ ինչպես անցյալում, անպես էլ ներկայում գոյություն ունի «Հայաստան» հասկացության կրողը՝ **հայ ազգը**, որին մտովի անգամ հնարավոր չէ տարանջատել իր **հայրենիքից**: Ուստի եթե ելնելով անվտանգային նկատառումներից, փորձ է արվում «հայրենիք» հասկացությունը արհեստականորեն սեղմել պետական սահմանների շրջագծում, ապա ի՞նչ է արվելու ազգի հետ, որը հայրենիքի շնչող ու ոգեղեն արտահայտությունն է՝ գաղափարակիրը: **Սա է գլխավոր հարցը** ու նաև՝ գլխավոր վտանգը, քանզի ազգը ոչնչացնելու երկու ձև կա՝ ֆիզիկապես, որն արդեն փորձարկվել է, և բարոյապես ու ինտելեկտուալ առումով, որը փորձարկվում է մեր աչքերի առաջ:

Ուրեմն՛ դժվար չէ հասկանալ, որ պետության նույնականացումը հայրենիքի հետ՝ որպես «իրական Հայաստան», նպատակ ունի նրանից դուրս մղելու հայ ազգին՝ ստեղծելով մարմին առանց հոգու: Իսկ դա մարտահրավեր է ոչ միայն հայ ազգին, այլև նոր ժամանակների արևմտյան ողջ քաղաքական խոսույթին: Վերջինս նվազագույնը՝ Ֆրանսիական Մեծ հեղափոխության օրերից, հիմնված է եղել և այսօր էլ հիմնված է **ազգ-պետություն** կոնցեպտի վրա, այսինքն՝ ազգ (nation) ասելով քաղաքակիրթ աշխարհը հասկանում է պետականորեն կազմակերպվելու փաստը, կամ գոնե՝ պետականության վերականգնման ձգտումը՝ ազգային-ազատագրական պայքարը: Ուստի «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» նախագծի միջոցով կիրառվող «Հայրենիքը պետությունն է» արտահայտությունը արմատական հակասության մեջ է 1789 թ. օգոստոսի 26-ի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» ամրագրված «Ցանկացած ինքնիշխանության սկզբունք պայմանավորված է ԱԶԳԻ գոյությամբ» հիմնագաղափարի հետ: (https://www.elysee. fr/la-presidence/la-declaration-des-droits-de-l-homme-et-du-citoyen):

Քանի որ քաղաքակիրթ երկրներում ազգն է ստեղծել պետություն, հայ ազգն էլ 19-րդ դարի կեսերից որդեգրելով Ֆրանսիական մեծ հեղափոխության «le principe des nationalités»-ն՝ **ազգայնության սկզբունքը,** ստեղծել է Հայաստանի Հանրապետությունը մեր հայրենիքի այն հատվածում, որտեղ կարողացել է իրացնել ինքնորոշման իր իրավունքը: Ուստի Հայաստանի Հանրապետությունը պարառում է միջազգային պայմանագրերով հայ ազգին պատկանող իրավունքների ողջ հանրագումարը, որոնք, ամենևին էլ չեն հակասում միջազգային իրավունքի նորմերին: Ստացվում է, որ բուն հակասու-

թյունը «Իրական Հայաստանի գաղափարախոսության» հեղինակների ուղեղներում է, որոնք **իրական Հայաստան** հասկացությունը հակադրելով **պատմական Հայաստան** եզրույթին, սևի ու սպիտակի բաժանման իրենց ամբոխահաճ քաղտեխնոլոգիան տարածել են Հայոց պատմության վրա:

Մինչդեռ եթե քաղաքականության մեջ պոպուլիզմը երբեմն տպավորիչ արդյունքներ է ապահովում, ապա գիտության մեջ նման ոչ գրագետ հնարքները կարող են առաջ բերել անգամ ուսանողների զարմանքը: Որովհետև եթե մեջբերենք «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» նախագծի հիմնական, առանցքային գաղափարները, ապա կհամոզվենք, որ նրանում առկա է ցանկացած գրագետ տեքստի համար անթուլատրելի, պարզունակ խոտան: Թվարկենք մի քանի օրինակներ.

«*Ինչպես հոգին մարմնով դառնում է մարդ, այնպես ազգը պետությամբ դառնում է ժողովուրդ–Ազգ և ժողովուրդ հասկացությունները հաճախ նույնացվում են: Բայց քաղաքական դիտանկյունից դրանք էականորեն տարբերվում են՝ շարունակելով փոխկապակցված լինել մեկը մյուսին: Ազգը, ըստ այդմ, էթնիկ ընդհանրություն ունեցող հավաքականությունն է, որը կապված չէ քաղաքական ընդհանուր իրավունակությամբ, իսկ ժողովուրդը քաղաքական իրավունակությամբ օժտված հավաքականությունն է, որն ունի ընդհանուր քաղաքացիություն, ասել է թե՝ ժողովուրդը պետականակերտ ինստիտուտն է, սահմանադիրը, իշխանության աղբյուրը և իշխանության գերագույն կրողը*» (https:// www. primeminister.am/hy/statements-and-messages/item/ 2025/02/19/ Nikol-Pashinyan-Speech/:)

«*Ազգը պետությամբ դառնում է ժողովուրդ*» քաղաքագիտական նոնսենսից ստացվում է, որ ազգերը ձևավորվել են ժողովուրդներից առաջ: Վերջին դարերի համաշխարհային պատմագիտությունն ու 20-րդ դարի ազգայնականության տեսությունը՝ իր **բենեդիկտանդերսոններով** ու **էռնստգելներներով**, թերևս տեղյակ չէին, որ 21-րդ դարում հումանիտար ու հասարակական գիտությունները գլխիվայր են շրջվելու և պարզվելու է, թե ազգը սոսկ էթնիկ ընդհանրություն ունեցող հավաքականությունն է, իսկ նրանից առաջ ձևավորված ժողովուրդը՝ պետականակերտ ինստիտուտ: Ըստ դրա՝ ստացվում է որ հայերս ոչ թե 19-րդ դարում, այլ Արարատյան թագավորության շրջանում ենք դարձել ազգ, որպեսզի 1918 թվականին մեր վերականգնածը 2018-ին կրկին վերածենք ժողովրդի:

Փաստաթղթի հեղինակները ծանոթ չեն անգամ այն հանրահայտ փաստին, որ անցյալում հայերենում գործածված **ազգ** հասկացությունը ունեցել է ցեղի, էթնոսի, ժողովրդի իմաստները, իսկ միջնադարում ձեռք է բերել հայ-քրիստոնյաների կրոնական համայնքի նշանակություն, որ նոր ժամանակներում դառնա ժամանակակից ազգի բնորոշումը: Ուրեմն ի՞նչ է սա. չիմացու-

թյո՞ւն, թե՞ անմեղսունակ ձևանալու ձգտում, որի միջոցով փաստորեն գլխի-վայր է շրջվում ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային պատմությունը:

Նույնքան տարօրինակ է նաև «*Հայ ժողովուրդը Հայաստանի ժողովրդի առանցքն է: Հայաստանի ժողովրդի մաս են նաև այլ ազգերի ներկայացուցիչ հանդիսացող ՀՀ քաղաքացիները*» (https://www.primeminister.am /hy/ statements-and-messages/item/2025/02/19/Nikol-Pashinyan-Speech/) պնդումը: Այստեղ ժողովուրդ-ազգ-պետություն-քաղաքացի հասկացութային համակարգը փոխարինվում է «Հայաստանի ժողովուրդ» անհասկանալի արտահայտությամբ, որ խառնաշփոթ է ստեղծում նաև քաղաքացիական հասարակության ընկալման մեջ:

Պարզ երևում է, որ փաստաթղթի հեղինակները համառորեն փորձում են միմանց հետ հաշտեցնել սոցիալական պետության գաղափարը (հացի խնդիրը) և անզուսպ հարստանալու ձգտումը՝ պետությունը շփոթելով շահակցական միության հետ: Արդյունքում՝ օրենքի վրա հիմնված առողջ մրցակցային միջավայրի ձևավորման խնդրի փոխարեն առաջ է քաշվում հետևյալ կրկնաբանությունը՝ «թե՛ պետությունը, թե՛ անհատը պետք է կապված լինեն նաև իրար հարստացնելու փոխադարձ ցանկությամբ, հանրությունը, խմբերը, անհատները պետք է համախմբված լինեն իրար հարստացնելու փոխադարձ մղմամբ» (https://www. primeminister. am/hy/statements-and-messages/item/ 2025/02/19/Nikol-Pashinyan-Speech/): Այս անմեղ թվացող բառակույտից կոռուպցիոն ռիսկերի հոտ է գալիս, քանի որ անհասկանալի է, թե կապիտալիստական հասարակության մեջ բարեկեցությունն իբրև գերխնդիր հռչակելու պայմաններում ինչպե՞ս է ընթանալու փոխադարձ հարստացման գործընթացը: Թերևս՝ «հին օլիգարխների» ու «նոր էլիտայի» հարաբերությունների ծիրում:

Դժվար չէ նկատել, որ այս շինծու «դատողությունները» գավառամտությամբ տառապող անձանց դեսից-դենից հավաքած մտքեր են, որոնք չգիտես ինչու պսակվում են «*Իրական Հայաստանի գաղափարախոսությունը հիմնված է հայ ժողովրդի ազգային արժեքների վրա*» *հեղևությամբ* (https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/ 2025/02/19/Nikol-Pashinyan-Speech/): Ակնհայտ է, որ ազգային արժեքները վերը բերված չարչիական տվայտանքների հետ շփոթելու պարագայում կարող է տպավորություն ստեղծվել, որ դրանցից մեկը՝ **Մոնթե Մելքոնյանը** Արցախ էր մեկնել հացի խնդիր լուծելու համար:

**Առավել տարօրինակ են «Իրական Հայաստանի գաղափարախոսությունն» անլրջացնող հետևյալ դատողությունները.**

1. Փաստաթղթում մի կողմից՝ սահմանվում է «**հայ ժողովուրդ (Հայաստանի Հանրապետություն)** նույնականությունը, իսկ մյուս կողմից՝ հայ ժողովրդի ազգային արժեքների շարքին է դասվում «Համահայկական ներուժը, հայկա-

կան սփյուռքը» https://www.primeminister.am/hy/ statements-and-messages/ item/2025/02/19/Nikol-Pashinyan-Speech/): Եթե Սփյուռքը չի դիտվում որպես հայ ժողովրդի մաս, ապա ինչո՞ւ է համարվում ազգային արժեք:

2. Փաստաթղթի հեղինակները չեն տարբերակում **ազգային** և **համամարդկային արժեքներ** հասկացությունները: Այլապես՝ ինչո՞ւ է հայ ժողովրդի ազգային արժեք համարվում «*Տարածաշրջանային պարկանելությունը, համաշխարհային քաղաքակրթությունը, գարածաշրջանային, դասական և ժամանակակից մշակույթը*»: https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/ 2025/02/19/Nikol-Pashinyan-Speech/): Իմացական անմեղսունակության մասին վկայող այս հակասությունը թերևս հնարավոր է հաղթահարել խորհրդային շրջանում հավասարապես և՛ Ադրբեջանի և՛ Հայաստանի պարգևներին արժանացած **Զեյնաբ Խանլարովային** ազգային ու համամարդկային արժեք հռչակելու պարագայում:

3. Փաստաթղթի հեղինակները մի կողմից՝ գտնում են, որ «*Ընդանեկան, գերդասարանային կապերի ամրության հայաստանյան ավանդույթը կենսական ռեսուրս է*», իսկ մյուս կողմից՝ կարծում են, որ «*Ինչպես անհատը, այնպես էլ հանրությունն ու պետությունը պետք է ռեֆլեքսիայի հմտությունը խորացնեն մինչև գենետիկ մակարդակ*» https://www.primeminister. am/hy/statements-and-messages/item/2025/02/19/Nikol-Pashinyan-Speech/): Հնարավոր է, որ գիտությունը «գտել է» ռեֆլեքսիան գենետիկ մակարդակ տեղափոխելու աշխատակարգերը, բայց գերդաստանային կապերի ամրությունը գենետիկ մակարդակ տեղափոխելու «հանճարեղ» գաղափարի իրականացումը ակնկալում ենք միայն «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» նախագծի հեղինակներից:

Ընդհանրապես, քննարկվող փաստաթուղթը հակասական տպավորություն է թողնում: Նրանում առկա ակնհայտորեն՝ պրոգրեսիստական մտավարժանքները զուգակցվում են խիստ պարզունակ, անգամ՝ գռեհիկ գավառամտության հետ: Կարծես գործ ունենք 19-րդ դարում արագորեն եվրոպականացող Կ. Պոլսի մթնոլորտում հայտնված Հակոբ Պարոնյանի հայտնի հերոսների մակերեսային **ա լա ֆրանգա**-ի հետ: Կենցաղային մակարդակում նման անհամատեղելի դատողություններին կարելի էր նուրբ հումորով վերաբերվել, ի վերջո, ինչպես պոլսեցիներն էին ասում՝ «**ազգս կը յառաջադիմէ կոր**»: Սակայն երբ խոսքը երկրի ճակատագրի համար պատասխանատու անձանց քաղաքական բառապաշարի մասին է, ապա այստեղ ծիծաղելու փոխարեն՝ լացելու ցանկություն է առաջանում:

## 2. Տրոցկիզմի ու բուխարինականության խառնուրդը

Դրականորեն կարելի է գնահատել այն փաստը, որ «Իրական Հայաստանի գաղափարախոսության» հեղինակները տեղյակ են, որ գոյություն ունի Հայաստանի Հանրապետությունը՝ իր միջազգայնորեն ճանաչված սահման-

ներով: Բայց երբ նման «հայտնագործությունը» վերածվում է հայկական պետությանը նոր ինքնություն ներարկելու ցանկության, ապա ոմանց թվում է, որ դրա համար բավական է Հայաստանի Հանրապետությունը հռչակել «իրական Հայաստան» ու հրաժարվել հայ ազգի բոլոր իրավունքներից և մեր անվտանգության ապահովման խնդիրը լուծված կլինի:

Մինչդեռ եթե երկրի անվտանգությունը փնտրում ենք հարևանների հետ հարաբերությունների ծիրում, ապա ներկա աշխարհակարգում, որտեղ միջազգայնորեն ճանաչված սահմաններն են անգամ կասկածի տակ դրվում, մեր անվտանգության երաշխիքները մեխանիկորեն հանձնում ենք պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ առաջնորդվող բացահայտ ֆաշիստներին: Քանզի Հայաստանի սահմանափակ հնարավորությունները հաշվառելու անհրաժեշտությունը ուղղակի կապ չունի մեր հանդեպ թշնամու ունեցած ագրեսիվ մտադրությունների հետ: Ակնհայտ է, որ նախապատրաստվելով աշխարհակարգի վերջնական փլուզմանը, մեր զույգ հարևանները ինտենսիվորեն զինվում են՝ ցույց տալով, որ իրենք չեն պատրաստվում ճանաչել անգամ «իրական Հայաստանը»: Նման պայմաններում բավարա՞ր է արդյոք ժամանակից շուտ նրանց չսադրելու ցանկությունը, երբ «Իրական Հայաստանի գաղափարախոսության» մեջ բացակայում է գլոբալ ու տարածաշրջանային զարգացումներից բխող ռազմավարական հեռանկարների գիտակցումը: Փոխարենը՝ նրանում առկա դատողութոնները պատճենում են խորհրդային հայտնի մուլտֆիլմի հերոս **Վինի Թուխ** արջուկի «տրամաբանությունը»: Հիշենք, որ այդ համակրելի արջուկին թվում էր, որ իրեն անվնաս ամպ ձևացնելով՝ (**я тучка, тучка, тучка, а вовсе не медведь**) կարող է չսադրել մեղվափեթակի մոտ հայտնված իշամեղուներին, որոնք շատ նման են մեր իշխանությունների տարածաշրջանային զույգ գործընկերներին: Նման մտածելակերպով հայ ազգի գոյության փաստը քողարկելու ցանկությունը թուլացնում ու ներքնապես կազմալուծում է մեր հանրությանը: Այս կեղծ պացիֆիզմը կարող է ապակողմնորոշել միայն մեզ, բայց ոչ մեր հարևաններին, որոնք ապրում են պատմական Հայաստանի տարածքներում, ուստիև ձգտում են օր առաջ ոչնչացնել իրական Հայաստանը, որ հայ ազգին դուրս մղեն ոչ միայն իր նախկին, այլև ներկա սահմաններից և դրանով մեկընդմիշտ փակեն Հայկական հարցը: Իսկ հայ ազգն իր հերթին լավ գիտի, որ եթե 20-րդ դարասկզբին իր լեգիտիմ իրավունքները սոսկ մասնակիորեն են բավարարվել, կամ՝ չեն իրացվել, ապա դա չի նշանակում, որ վերջիններս գոյություն չունեն:

Ուրեմն սեփական իրավունքների ու մտադրությունների քողարկման վրա հիմնված վինիթուխյան գործելակերպը մեր զույգ հարևանների հետ Հայաստանի ներկա իշխանությունների քաղաքականության սինխրոնացման արդյունքն է: Դա թույլ է տալիս կանխատեսելու, որ նախորդ տարիների ընթացքում Վինի Թուխ արջուկի խաղաղասիրական հավաստիացումներն ան-

տեսելուց ու նրա հետույքը մի քանի անգամ խայթելուց հետո, մեր հարևաններն առաջիկայում հանդես են գալու անձնատվության նոր փաթեթով: Իսկ մինչ այդ՝ ճակատագրական ընտրության նախապատրաստվող հայ ազգին դոնդողանման զանգվածի վերածելու քաղաքականությունը հանգեցնելու է նրան, որ ընտրություններից հետո մեր իշխանություններն ընդունելու են այդ անձնատվության բանաձևը՝ ուծացման կամ՝ արտագաղթելու երկընտրանքը:

«Իրական Հայաստանի գաղափարախոսությունը» հայկական ինքնությունը վերածում է կամավոր կերպով հայրենազրկվելու հեռանկարին պատրաստ գաղթականի հոգեբանության, որը ներկայումս պետք է սահմանափակվի հացի խնդիր լուծելով՝ զուգահեռաբար վերացնելով պետության հիմնական օրենքը՝ ՀՀ Սահմանադրությունը, որպեսզի անցավ թույն ընդունելով՝ որդեգրի կամավոր ինքնասպանության ուղին: Դրանով մոռացության է տրվում այն անհերքելի փաստը, որ նոր ժամանակներում Հայաստանն իրական է դարձել հայ ազգի պայքարի ու նահատակության շնորհիվ, որն ամենևին էլ հացի խնդիր լուծողների թվաբանական գումարը չէր, այլ հայ ժողովրդի գիտակից ու կամային մասը:

**Հայաստանն իրական է դարձել ոչ թե մեր ճակատագրի հետ հաշտվելու, այլ պետականազուրկ իրականության ու պետականության տեսլականի անլուծելի թվացող հակասությունը հաղթահարելու միջոցով**: Ուստի այդ մեծագույն հաջողության կերպավորումը՝ Հայաստանի Հանրապետությունը հարևանների հետ խաղաղ գոյակցության հուն տեղափոխելու խնդիրը չի կարող լուծվել իրական Հայաստանը՝ պատմական Հայաստանին հակադրելու միջոցով: Անվտանգ ապագայի տեսլականը պետք է վաստակել ոչ թե անմխիթար ներկան՝ հերոսական անցյալին հակադրելու, այլ **անցյալը, ներկան և ապագան մեկ ամբողջության մեջ դիտարկելու միջոցով**: Հակառակ պարագայում ստացվում է, որ եթե մեր ներկան անցյալի մերժումն է, իսկ ապագան՝ սոսկ անձնական ու հավաքական բարեկեցության ապահովման օգտապաշտական փիլիսոփայությունը, ապա նրանում հայ ազգը՝ որպես հավաքականություն և Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետություն, որևէ անելիք չունեն: Դրանով անցյալում ստեղծված Հայաստանի Հանրապետության գոյությունը զրկվում է իր իմաստից, որովհետև խելացի ու ճարպիկ հայի համար ավելի դյուրին է ցրվել ողջ աշխարհում ու հարստանալ օտար միջավայրերում, քան իր նման խելացի ու ճարպիկ հայերի շրջանում: Ուրեմն՝ հայրենի հողի վրա հարստանալու գրավիչ տեսլականը չի կարող միավորել հայությանը, եթե անտեսվում է պատմական փորձով ամրագրված նրա հավաքական գոյության երկրորդ հենասյունը: Բերենք ասվածն ապացուցող երեք պատմական փաստեր: Առաջինը՝ **1918 թվականից**, երկրորդը՝ **1999 թվականից**, իսկ երրորդը՝ արդեն անցյալի վերածվող **2025 թվականից:**

**1918 թվական**

Վեց ամիս շարունակ ղեկավարելով Բաքվի հերոսամարտը և դրանով շեղելով Օսմանյան կասրության բանակի հարվածի հիմնական ուղղությունը, Հայաստանի Հանրապետության ու նրա անձուկ սահմաններում ծվարած արմնտահայության մնացորդացի ֆիզիկական գոյությունն ապահոված ՀՅԴ առաջնորդ **Ռոստոմը** 1918 թվականի նոյեմբերյան զինադադարի օրերին Պարսկաստանից իր վերջին նամակն է գրում իր զինակիցներին՝ պահանջելով վերադառնալ Հայրենիք՝ նրա **վերաշինության** ու **պաշտպանության** գործը շարունակելու համար: Եվ այդ վերջին նամակի, վերջին նախադասության, վերջին բառը, մեր ներկա մայրաքաղաքի ԵՐԵՎԱՆ անվանումն է: (Ռոստոմի անտիպ նամակները, էջ 665):

**1999 թվական**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում հաղթանակ արձանագրած Վազգեն Սարգսյանի ու Կարեն Դեմիրճյանի քաղաքական դաշինքն առաջադրում է ճիշտ այդ նույն՝ վերաշինության ու պաշտպանության խնդիրը՝ «**Կառուցենք և պաշտպանենք**» կարգախոսի միջոցով:

**2025 թվական**

Ազգային ժողովի **2026 թվականի** ընտրությունների համար հրապարակելով «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» նախագիծը, Հայաստանում իշխող քաղաքական ուժն առաջ է քաշում Վ. Լենինի հավատարիմ զինակիցներ Լ. Տրոցկու՝ **խաղաղություն զիջումների միջոցով** և Ն. Բուխարինի՝ **հարստանանք** կարգախոսները:

**Եզրակացությունը** պարզ է՝ վերաշինությունը, խաղաղությունն ու հարստությունը, նախ և առաջ, պաշտպանության կարիք ունեն՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում, խնդիր, որը բացակայում է «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» **տրոցկիստաբուխարինական** նախագծում: Որովհետև Լ. Տրոցկու կարգախոսը 1918-ին Բրեստ-Լիտովսկում «դիվանագիտորեն» պարտված երկրի ներկայացուցչին համակած՝ **անձնատվության գաղափարի** արտացոլումն էր, իսկ հարստանալու բուխարինյան մոլուցքը այն նույն համախտանիշն է, որով, դժբախտաբար, տառապում են նաև նրա հայաստանյան կրկնօրինակները:

## 3. Ինչպե՞ս է ստեղծվել իրական Հայաստանը

Հայ պատմաբանների ու հրապարակախոսների մեծամասնությունը փաստակույտերի լեռներ է ստեղծել հայոց մեծ ու փոքր սխալների ու սայթաքումների մասին: Բայց մինչ օրս քչերն են արձանագրել այն իրողությունը, որ շահ Աբասի կողմից Արևելյան Հայաստանի զգալի մասի հայաթափման և ապա՝ Արևմտյան Հայաստանին բաժին ընկած դաժան ճակատագրի պայման-

ներում հայրենիքի ազատագրության խնդիրն առաջ մղած և իր տրամաբանական լուծմանը հասցրած հայ ազատամարտի գործիչները մեծագույն սխրանք են գործել, որի հանդեպ նսեմանում են նրանց ժառանգության շուրջ ծավալվող ներկա բանավեճերը:

Հայ ազգի կողմից իրական Հայաստանի փնտրտուքը սկսվել է այն պահին, երբ պատմական Հայաստանի տարածքում իր պետականությունը կորցրած հանրույթը զգաց ու գիտակցեց նոր ժամանակների շունչն ու ոգին և հասկացավ, որ Հայաստանը կա, գոյություն ունի մեր գիտակցության մեջ, որը անցյալն ապագայի հետ կապող կամուրջն է: Այդ ցանկությունը հայ ազատագրական մտքի կողմից ձևակերպվել է որպես իր լուծումը պահանջող **նոր** կամ **ազատ Հայաստանի** տեսլական, իսկ քաղաքական գետնի վրա դրսևորվել է իբրև վերջինիս հայկականության, այսինքն՝ **ժողովրդագրական նկարագրի** ընկալում: Պետական կեցությամբ հատկանշվող անցյալի ու նրա բացակայությունը սուր կերպով զգացող ներկայի նման հակադրության միջոցով են ուրվագծվել պետականության վերականգնման ուղիները:

**Այս առումով եթե փորձենք համեմատել այն ելակետային պարամետրերը, որոնք բնորոշ էին նոր ժամանակների հայության պետականազուրկ կեցությանն ու ներկա հետարդիական իրողություններին, ապա միանշանակորեն կարող ենք եզրակացնել, որ ներկա սերնդի առջև դրված խնդիրները շատ ավելի դյուրին են, իսկ հնարավորությունները՝ շատ ավելի մեծ**:

*16–18-րդ դարերում Հայաստանի տարածքների բռնազավթումն ու մասնակի բնակեցումը հիմնականում՝ թյուրքական ծագում ունեցող քոչվորական ցեղերի, մասամբ նաև՝ օսմանյան սուլթանների հովանավորությունը վայելող քրդական աշիրեթների կողմից, մեր հայրենիքում ստեղծել էր շերտընդմեջ բնակության պատմական իրողությունը, որի հետևանքով ազատության համար կռիվն անխուսափելիորեն վերածվում էր գոյության կռվի: Բայց Հայաստանի էթնիկ նկարագրի աղճատումը ոչ միայն չէր վերացրել մեր երկրի տիտղոսը, այլև ստեղծել էր մի նոր իրականություն, երբ երկրի իրական տերը հանդիսացող էթնոսի այն մասը, որը չէր գաղթել սեփական հայրենիքից, պետք է ընտրություն կատարեր բարոյապես ոչնչանալու (ձուլվելու) և իր արյան գնով ազատություն ձեռք բերելու երկընտրանքի միջև: Ահա այս ընտրության արդունքում է, որ ձևավորվել են նոր ժամանակների հայրենաբնակ հայության երկու պատմական տիպերը՝ սեփական հողի վրա **ստրկացված մեծամասնությունը** և հիմնականում լեռներում պատսպարված՝ **դիմադրունակ փոքրամասնությունը**: Հենց վերջինիս շարքերից է դուրս եկել ազգի ընտրանին՝ այն **գաղափարական փոքրամասնությունը**, որը հակառակ անտարբեր մեծամասնության, մինչև վերջ մղել է իր կռիվը, առանց որի, չէինք ունենա ներկա իրական Հայաստանը:*

Այդ անհավասար կռվում հեռանկարային ռազմավարություն ու գործուն մարտավարություն որդեգրելու բարդ խնդրի ողջ տարրողությունը խորությամբ ընկալվել է միայն ՀՅ Դաշնակցության կողմից: Հենց ՀՅԴ Հիմնադիր ժողովներում է (1890 թ.), որ առաջին անգամ բարձրացվել է իրական ու պատմական Հայաստանների տարբերության հարցը՝ իբրև **իդեալի ու իրականության** հակաթեզ: Նման իրողությունը պայմանավորված էր նրանով, որ այդ ժողովների մասնակիցներից շատերն արդեն եղել էին Արևմտյան Հայաստանում և իրենց աչքով տեսել ու համոզվել էին, որ երկիրը դեռևս պատրաստ չէ ընդհանուր ապստամբության միջոցով ազատագրվելուն և՛ ժողովրդի ստրկացված վիճակի և՛ նրա շերտընդմեջ բնակության պատճառով: Բայց երբ Հայաստանի արևելյան մասին էլ սպառնում էր խաղաղ ձուլման վտանգը, **թուրքական զուլումի** ու **ռուսական ձուլումի** արանքում սկիզբ առնող պայքարը պահանջում էր այնպիսի ջանքեր ու զոհողություններ, որոնց հանդիման ներկայիս պայմաններն ուղղակի դրախտ են թվում: Ուստի պատահական չէ, որ հաշվի առնելով այդ իրողությունը, կուսակցության ծրագրային փաստաթղթերում ՀՅԴ հիմնադիրներն ամրագրել էին, որ իրենք ինչպես հեռավոր անցյալին, նույնպես և իդեալական ապագային տալիս են երկրորդական նշանակություն, քանի որ «անհրաժեշտ է, իբրեւ հիմք, վերցնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաև ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան» («Դրօշակ», 1892, N 3, էջ 1): Այսինքն՝ իրական Հայաստան կերտող սերունդը ամենևին էլ չէր առաջնորդվում իրականությունը՝ պատմությանը զոհաբերելու սկզբունքով, այլ պատմական Հայաստանի մասին մտածում էր միայն ոգեղեն սնունդ ձեռք բերելու նպատակով: Դա է պատճառը, որ ազգին բաժին ընկած դառն իրականության վրա հիմնվող ՀՅԴ քաղաքական պահանջներն ամենաչափավորն էին, իսկ գործելակերպը՝ ամենաարմատականը: Ուստի 1892, 1895, 1898 թվականներին կայացած ՀՅԴ ընդհանուր ու ռայոնական ժողովներում մի քանի անգամ փոխվել ու սահմանափակվել են կուսակցության ընթացիկ-քաղաքական պահանջները՝ ի վերջո հանգելով **ուժերի կենտրոնացման** միջոցով հայրենիքի գոնե մի հատվածն ազատագրելու գաղափարին: Սա կենդանի գործը՝ ազատագրական պայքարը, շարունակելու կամքի ու ռեալ հնարավորությունների հաշվառման՝ **քաղաքական պրագմատիզմի** դասական օրինակ է:

Այդպես շարունակվեց ընդհուպ մինչև Ռուսական առաջին հեղափոխությունը, երբ «մի կտոր հող» ունենալու խնդիրը տեղափոխվեց Անդրկովկաս, որտեղ ուժերի կենտրոնացման միջոցով ՀՅ Դաշնակցությունը ստեղծեց շուրջ 15 հազար մարտիկներից բաղկացած ինքնապաշտպանական բանակ, որը գծեց ապագա ազատ ու անկախ Հայաստանի սահմանները: Բայց անգամ այդ ճակատագրական պահին, երբ անհնար էր հրաժարվել կովկասյան մար-

ՎէՄ համահայկական հանդես, ԺԷ (ԻԳ) տարի, թիվ 4 (92), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2025

տադաշտից, հնչեց Քր. Միքայելյանի պատգամ-նախազգուշացումը: Կանխազգալով իր մոտալուտ մահը՝ Սոֆիայում գտնվող և սուլթանի մահափորձը նախապատրաստող ՀՅԴ առաջնորդը հայ-թաթարական կռիվների բովում հայտնված իր ընկերներին գրեց մի ծավալուն նամակ, որը նրա **քաղաքական կտակն** է: Այստեղ նա խնդրում ու պահանջում էր իր ընկերներից՝ ինչ էլ որ լինի, երբեք չմոռանալ Արևմտյան Հայաստանի մասին, այսինքն՝ **տեր կանգնելով իրականությանը**, **անխաթար պահել իդեալը** (Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները, էջ 281–289):

Նման հանգրվանային ռազմավարության միջոցով իդեալն ու իրականությունը հաշտեցնելու համար ներկայումս հարկավոր է վերջ տալ պարզունակ ներքաղաքական կատակերգություններին, որոնց ականատեսն ենք մենք այսօր: Այո, բարդ է իրականությունը, բայց նա այդքան անհույս չի թվում, ինչպես նախկինում էր: Ակնհայտ է, որ հայ քաղաքական միտքն ի զորու է փնտրելու և գտնելու հայրենիքի փրկության ուղիները, եթե առաջիկա խորհրդարանական ընտրություններից առաջ իր ուժերն ու հնարավորությունները կենտրոնացնի **միասնական ազգային օրակարգի** ձևավորման խնդրի վրա, ինչը ենթադրում է արտաքին քաղաքական կողմնորոշումների աղետալի դիմակայության փոխարինումը դրանց կրողը հանդիսացող քաղաքական ուժերի ներքին դերաբաշխումներով: Նման օրակարգի առկայության պարագայում «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» կոչվող փաստաթղթի վրա ծիծաղելու կամ լացելու ժամանակ անգամ չենք ունենա, ինչպես մեր ընթերցողներն ունեցան՝ ներկա հրապարակման հետ ծանոթանալու ընթացքում:

## Եզրակացություններ

**Հայաստանի Հանրապետության իրական (ռեալ) գոյության պայմաններում «իրական Հայաստան» հասկացության հորինումը պարզ կրկնաբանության միջոցով գործի դրվող քաղաքական հնարք է, որը մեր վտանգված իրականության ճշմարիտ (գիտական) արտացոլումը փոխարինում է հայկական ռեզերվացիայի գաղափարաբանությամբ:** Այն հորինվել և քաղաքական ցուցանակի է վերածվել միայն ու միայն մեկ նպատակով՝ հայկական ավանդական ազգային քաղաքականությունից «**հրաժարիմքի**» տպավորություն ստեղծելու համար: Առայժմ խոսքը միայն տպավորության մասին է: Ի վերջո՝ նման հնարքի իրական ճարտարապետները, հասկանալի պատճառներով, չեն կարող կանգնել մեր ժողովրդի առջև, ուստի Հայաստանում ստեղծելով իրենց անկեղծորեն հավատացողների սահմանափակ շրջանակ, փորձում են գործել ուրիշների ձեռքով: Ուստի այդ ոչ գրագետ կատարողների իմացական անմեղսու-

նակության պատճառով՝ հայկական ռեզերվացիայի գոյության անհրաժեշտության մասին փաստարկումները սովորական մուլտֆիլմի սյուժեի են վերածվում: Պատճառն այն է, որ ռազմավարական առումով նման քաղաքական «պերֆորմանսը» որևէ հեռանկար չունի, քանզի նրա առջև դրված խորքային նպատակը՝ ռեզերվացիայի վերածվող Հայաստանի ինտեգրումը թյուրքական աշխարհի մեջ, անիրականանալի է գլոբալ ուժերի նոր դասավորության պայմաններում:

Ներկա փլուզվող աշխարհակարգում բացառվում է Խորհրդային Հայաստանը հիշեցնող մի **նոր հայկական ռեզերվացիայի** ձևավորումը ԽՍՀՄ-ի փոխարեն՝ այս անգամ էլ Մեծ Թուրանին ծառայելու համար: Ուստի ներկայումս հայության մտահոգ ու մտածող մասի խնդիրը ոչ թե «Իրական Հայաստանի գաղափարախոսության» հիմքում դրված **ռեզերվացիաների փոխատեղման** նպատակադրումի սպասարկումն է, այլ նոր աշխարհակարգում կյանքի ու մահվան երկընտրանքի առջև հայտնվող Հայաստանի ներքին ու արտաքին **դիմադրողականության** մեծացման մասին մտածելու և գործելու կամքն ու վճռականությունը: Այսինքն՝ վատի ու վատագույնի միջև ընտրություն կատարելու փակուղային «երկընտրանքը», որի արանքում վերջին տարիներին բառի բուն իմաստով տառապում էր հայ հասարակության մտածող մասը, արդեն պատմության գիրկն է անցել: Որովհետև արդեն բացվել է այն «փակ տուփը», որի մեջ **թպրտում էր** Հայաստանը առնվազն՝ Առաջին Հանրապետության անկումից հետո: Այդ իրողությունից բխող առաջին տպավորությունը խիստ խաբուսիկ է: Թվում է, թե տարածաշրջանում «Լենին-Աթաթուրք» նոր գործարքը բացառող ԱՄՆ դիրքերի ամրապնդումը և Ռուսաստանի նահանջի խաբուսիկ նշանները Հարավային Կովկասում թուրք-ամերիկյան կոնսենսուսի առկայության մասին են վկայում: Մինչդեռ մեր շուրջը ծավալվող ավելի մեծ՝ գլոբալ խաղի խորքում ոչ թե ամերիկա-ռուսական դիմակայությունն է, այլ Չինաստանի հզորացումը սանձելու նպատակադրումը: Ուստի Մեծ Թուրանի ծրագիրը գործարկելու ամերիկյան սպառնալիքն իրականում աշխարհաքաղաքական շանտաժ է, որի իրական նպատակը Ռուսաստանին՝ ԱՄՆ-ի ու Չինաստանի միջև խուսանավելու հնարավորությունից զրկելն է: Արդյունքում՝ Մոսկվայի առջև հստակորեն ուրվագծվող հետխորհրդային ողջ հարավը կորցնելու և ապա՝ «ներքին թուրքերի» հետ պատերազմելու գոյաբանական սպառնալիքի կանխումը այժմ հնարավոր է միայն միասնական Արևմուտքի հետ քաղաքական երկխոսության վերականգնման միջոցով: Իսկ դա հղի է ոչ թե պարզապես՝ Թրամփ-Պուտին **սիներգիայի**, այլ քաղաքակրթական **մեծ կոնվերգենցիայի** հեռանկարով, քանզի «շախմատային մեծ խաղատախտակի» վրա այլ տարբերակներ չեն մնացել:

Մեր ներկա քննության նման լավատեսական ավարտի համապատկերում ուղղակի նսեմանում է Հայաստանը փակ ռեզերվացիաների հերթափոխի նոր օղակի վերածելու քաղաքական նպատակադրումը, որն ընկած է «Իրական Հայաստանի գաղափարախոսություն» ոչ գրագետ նախագծի հիմքում: Ուստի ակնհայտ է դառնում, որ այն գործելու է միայն ժամանակի կարճ տևողության ծիրում, երբ լուսաբացից առաջ խավարի թանձրությունն իր առավելագույն խտությանն է հասնում:

Խմբ:

## Օգտագործված գրականություն


1. Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները: Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ Երուանդ Փամպուքեանի, Եր, «Լուսակն», 2020, էջ 281–289:
2. «Դրօշակ», «Հայ Յեղափոխական. Դաշնակցութեան» օրգան, Դաշնակցութեան ազատ տպարան, 1892, N 3, փետրվար, էջ 1:
3. Ռոստոմի անտիպ նամակները: Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ Երուանդ Փամպուքեանի, Եր. «Լուսակն», 2022, էջ 665: